մասկոսէ, և կազմեցաւ ժողով մեծ 'ի դատարանի, ուր էին Քաղաքապետն, Դատաւորն և ամենայն Գլխաւորք այլազգեաց, հրաւիրեցան Յոյնք և Լատինք, գնացին և 'ի Հայոց Պօղոս, Մկրտիչ, Կարապետ և Եղիա եպիսկոպոսունք, Աբրահամ եւ Յակոբ վարդապետք, Թարգման Մուրատ, եւ Խանտամեան ոսկերիչ Մարգար, ընթերցան 'ի լուր ամենեցուն զհրովարտակն Արքայի, և զհրամանագիրս Բդեշխից Դամասկոսի և Աքքէի Ռաղուպ և Ապտուլլահ Փաշայից, և Դատաւորն յայտ արար ամենեցուն զիմաստս գրոց, ապա խնդրեցին Հայք կարգաւորել զխնդիրն 'ի տեղւոջ իւրում, և եղեալ անտի բազմութեամբ գնացին 'ի Տաճարն Ս. Յարութեան, և բազմեցան հանդիսաւ առաջի Դրան Գերեզմանին, և 'ի լինիլ բանից բաժանորդութեան՝ հակառակեցան բազմօք Յոյնք եւ Լատինք, բայց Դատաւորն պնդէր անթերի կատարել զհրաման Արքայի. Լատինք մատուցին հրովարտակ ինչ, զի նովաւ մաքառեսցին, բայց գտաւ 'ի նմա թէ Գերեզմանն և ոչ միոյ ազգի սեփհական է, ապա սկսան Հայք կարգաւ դնել զամենայն սպասս հաւասար Յունաց եւ Լատինաց, 2 զոյգ աշտանակ մեծ եւ միջակ 'ի Դուռն Գերեզմանին, և մի պատկեր յորմն Հրեշտակի վիմին, և Գերեզմանն Քրիստոսի երեք բաժին եղեւ, որոց մի մասն Հայոց, մի պատկեր և վեց աշտանակ, և յաւելին կախել 7 Կանթեղս 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի, որով եղեւ 13 հաւասար երկուց ազգաց, յատակս 'ի փոքր գրքբեթն, 'ի ճակատն եւ 'ի շրջապատս Գերեզմանին ամենայն պարագայիւք զարդարել հաւասար Յունաց եւ Լատինաց կանթեղօք, աշտանակօք և այլ ամենայն զարդուք յաւուրս յատկացեալ տօնից. սահմանեցաւ մի շաբաթ եւս Հայոց լուանալ եւ մաքրել զԳերեզմանն և զշրջապատս նորին եւ տարածել պաստառս, նոյնպէս եւ 'ի Պատանատեղին. 'ի մէջ գիշերի նախ պատարագել Յունաց ժամ 1½, և զկնի նոցա անմիջապէս Հայք, եւ ապա յարշալուսին Լատինք. եւ 'ի ժամ պատարագին հարկանել կոչնակ, դնել Աթոռ տարածել սիռոցս, և 'ի շրջանի տարւոյն յաւուրս հանդիսաւոր տօնից բանալ զԴուռն Տաճարին 5 անգամ ըստ նմանութեան երկուց ազգաց, եւ զայլ հանգամանս հաւասար ընկերութեան, տես 'ի Հէօճմէթն և 'ի հրովարտակն Ար-